

ՎԱՐՊԱՆ ԱՇՉՅԱՆ

Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԸ XVIII ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ
XIX ԴԱՐԻ ԱՈԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Կ. Պոլսի Պատրիարքությունը ստեղծվել է 1461 թվականին սուլթան Մուհամմեդ II Ֆաթիհի հրամանագրով: Առաջին Պատրիարքը եղել է Գովակիմ եպիսկոպոսը, որի աթոռանիստը սկզբում Սամաթիայի Ս. Գևորգ եկեղեցին էր, իսկ 1643-44 թթ. Աթոռը տեղափոխվեց Գում-Գափու: Թեև պաշտոնապես ընդունված է, որ Կ. Պոլսի Պատրիարքությունը ձևավորվել է 1461 թվականին, սակայն ամփիժելի փաստեր կան, որ Կ. Պոլսում Գայ Առաքելական եկեղեցին ուներ իր առաջնորդարանը դեռևս 1438 թվականին: Այդ է վկայում մասնավորապես տրապիզոնցի Գակոբ արքեպիսկոպի 1438 թվականի գրած հիշատակարանը Կ. Պոլսի արքեպիսկոպոս Տեր-Գովակիմի համար¹: Պարզապես Գայ Առաքելական եկեղեցին Օսմանյան կայսրության կազմավորումից հետո ոչ միայն սկսեց հարմարվել նոր պայմաններին, այլև «Գե-յուրե» ճանաչվեց թուրքական սուլթանի կողմից: Այս շրջանից են ձևավորվել Պատրիարքարանի իրավունքները և պարտավորությունները սուլթանական կառավարության հանդեպ: Սկզբնական շրջանում Կ. Պոլսի Պատրիարքության իրավասությունները տարածվում էին սահմանափակ տարածքների վրա, XV դարում, թուրքական գործերի նվաճումներից հետո, Տրապիզոնի և Ղրիմի հոգևոր թեմերը նույնպես ընդունեցին Կ. Պոլսի Պատրիարքության «գերակայությունը»: Չնայած որ XVII դարում որոշ թեմեր անցան էջմիածնի Սայր Աթոռին, բայց այնուամենայնիվ Կ. Պոլսի Պատրիարքության դերը և կշիռը չնվազեց և արևմտահայերի կյանքում այն դեռ զգալի դեր պետք է խաղար: Պետք է նկատել, որ Գայոց Պատրիարքի իրավասությունները լայն ընդգրկում ունեին դավանաբանական տեսակետից. «Սիւս կողմէն ալ որչափ Սիաբնակ Ուղղափառներ կային, հայ, վրացի, աղուան, ասորի քաղղէացի, դպտի, հապէշ, ամէնքն ալ իրենց ժողովուրդներով եւ պետերով ենթարկուեցան Գայ պատրիարքարանի իրաւասութեանց»²:

Կ. Պոլսի Պատրիարքը օժտված էր հոգևոր և աշխարհիկ իշխանությամբ, տնօրինում էր հայ համայնքի կրթությունն ու լուսավորությունը, տպագրության գործը, բարեգործական հաստատությունները: Արևմտյան Գայաստանում և Օսմանյան տիրակալության հայաբնակ այլ զավառներում սուլթանական իշխանությունը բազմաթիվ հարցերում իր քաղաքականությունը իրագործում էր Գայոց Պատրիարքի միջոցով:

¹ Տե՛ս Բարգե՛ն եպիսկոպոս, Կ. Պոլսոյ հայ Պատրիարքութեան ծագումը, «Գանդես ամսօրեայ», 1924, էջ 435-436:

² Մ. Օրմանեան, Գայոց եկեղեցին, Երևան, 1993, էջ 103:

Պատրիարքների իրավունքների մասին խոսելիս, տարբեր կարծիքների կարելի է հանգել, սակայն 1764 թվականի հունիսի 3-ին Գ. Պասմաճյանին տրված «Բերաթն» խոստովանության վավերագիր է և զալիս է հստակեցնելու Պատրիարքների իրավունքների շրջանակը: Ըստ այդ հրովարտակի, որը, ի դեպ, հայատառ թուրքերենով է գրված³, հայոց Պատրիարքը կարգավորում էր հայ ընկալության հոգևոր խնդիրները, նրա իմացությամբ էին նշանակվում կամ ազատվում թեմական առաջնորդները: Բացի ամուսնության, ամուսնալուծության խնդիրներից, որը, ի դեպ, ոչ միայն Կ. Պոլսի Պատրիարքի պարագայում, այլև դարեր շարունակ Հայ Եկեղեցու իրավունքների մեջ էր մտնում, Կ. Պոլսի հայոց Պատրիարքը զբաղվում էր քաղաքացիական, ժառանգության, տնտեսական, կրթա-մշակութային հարցերով:

Կ. Պոլսի Պատրիարքների գործունեության ուսումնասիրումը սկսեց Ջաքարիա Կաղզվանցուց: Նա Պատրիարք ընտրվեց 1773 թ. աշնանը: Նրա պատրիարքության առաջին տարիներին էական փոփոխություններ չեն եղել Կ. Պոլսի ազգային կյանքում: Սակայն հետագա տարիներին, ինչպես վկայում է Ս. Օրմանյանը, Ջաքարիա Կաղզվանցին սկսեց պայքարել այլադավանության դեմ: Կաղզվանցին հասկանում էր, որ միայն քարոզներով և խրատներով արդյունքի չես կարող հասնել: Նրա ջանքերը ուղղվեցին հայկական կրթության ստեղծմանը, որոնք հակակշիռ պետք է լինեին կաթոլիկական ուսումնական հաստատություններին: Ընդհանրապես իր բանիմաց աշակերտների (Հակոբոս, Բարդուղիմեոս, Հովհաննես, Հակոբ, Անդրեաս, Պողոս և Պետրոս Եպիսկոպոսներ, Թովմաս, Թադևոս, Կարապետ, Աստվածատուր վարդապետներ), նա հիմնեց թաղային վարժարաններ: Եվ ինչպես Օրմանյանն է նշում, «Պատուելիներ կամ վարժապետներ չուկայի կամ խանի մը մեջ սենեակ վարձելով յաճախորդներու կարդալ ու գրել, լեզու ու հմտութիւն կը սորվեցնէին»:

Ջաքարիա Կաղզվանցին իր պաշտոնակալության ութ տարիների ընթացքում բնական է, որ համակրողներ ու ընդդիմախոսներ ձեռք բերեց: Եվ բնական էր, որ վերջիններիս շարքերում էին կաթոլիկություն ընդունածները: Հանգամանքների բերումով, կապված Ղուկաս Կարնեցու Հայոց Կաթոլիկոս օծվելու հետ, Կաղզվանցին 1781 թվականին պաշտոնաձև արվեց:

Սակայն Ջաքարիա Կաղզվանցուն փոխարինած Հովհաննես Համադանցին իր բարձրության վրա չգտնվեց, սկսեց դաժան միջոցառումներ կիրառել կաթոլիկ հայերի նկատմամբ, ցուցաբերել անհարկի վարչարարություն, և զարմանալիս այն էր, որ թե՛ կաթոլիկ հայերը և թե՛ պոլսահայ լուսավորչականները, դժգոհելով Հովհաննես Համադանցուց, պահանջում էին նախորդ Պատրիարքի վերադարձը: Կաղզվանցու վերադարձը չուշացավ, խուսափելով ժողովրդական խավերի դժգոհությունից, Օսմանյան իշխանությունները վերականգնեցին նրան 1782 թ. մարտին: Կաղզվանցին պաշտոնավարեց մինչև 1799 թվականը: Վերստին դառնալով Պատրիարք, Կաղզվանցին չէր հրաժարվել իր գործելակերպից, միայն թե աշխատում էր ավելի ճկուն դիրքորոշում որդեգրել: Եուտով նա հրապարակեց հինգ կետից բաղկացած մի

³ Տե՛ս Ա. Պերպերեան, Հայոց պատմութիւն, 1871, Պոլիս, էջ 227-233:

կանոնակարգ, որով Պատրիարքարանը իրեն էր վերապահում Հայ Առաքելական Եկեղեցու ծիսակատարությունների հսկողությունը, ինչպես նաև պատժի ու ներման հետ կապված խնդիրները: Ձաքարիա Կաղզվանցին, շարունակելով իր ազգօգուտ գործունեությունը, կարողացավ մի շարք եկեղեցիներ կառուցել, հիվանդանոցներ, կրթօջախներ բաց անել: Նրան հաջողվեց 1787-1788 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ հասնել նրան, որ ոչ մահմեդական ժողովուրդները մասամբ մասնակցեն մարտական գործողություններին, թեև պատերազմի սկզբում Օսմանյան իշխանությունները հունական համայնքից 2000, իսկ հայերից՝ 1000 ռազմիկ էին պահանջել՝ թուրքական բանակում կռվելու համար: Ասկայն հույն և հայոց Պատրիարքների ջանքերով այդ թվերը հաջողվեց նվազեցնել համապատասխանաբար 1800-ի և 500-ի: Ձաքարիա Կաղզվանցին վախճանվեց 1799 թ. մարտին, 80 տարեկան հասակում: Նրա ազգանվեր գործունեությունը հիրավի դրվատանքի է արժանի: Կաղզվանցին այն եզակի Պատրիարքներից էր, որ, հանգամանքներից ելնելով, բարձր էր պահում հոգևորականի իր կոչումը՝ անաչառ ծառայելով իր ժողովրդին: Այս առումով համամիտ ենք Ս. Օրմանյանի՝ Ձաքարիա Կաղզվանցուն տված բնորոշմանը. «... այնպես որ իրամեր կրնանք Ձաքարիայի վերագրել, վերջին դարերու ազգային կրթական կամ բարոյական զարգացման մեջ կարելու դեր ունեցած ըլլալու պարծանքը»⁴: 1799 թվականին ընտրվեց նոր Պատրիարք՝ Դանիել Աուրմառեցին: Նրա առաջին գործը եղավ այն, որ Կ. Պոլսում ինչպես նաև ամբողջ Արևմտյան Հայաստանով մեկ մտցրեց Սիմեոն Երևանցու կողմից ընդունված նոր տոմարը, որը արդեն գործում էր Արևելյան Հայաստանում: XIX դարի սկիզբը նշանավորվեց մի շարք իրադարձություններով, որոնք առնչվեցին ինչպես Կ. Պոլսո Պատրիարքարանին, այնպես էլ էջմիածնի Մայր Աթոռին: Իրադարձությունները կապված էին կաթողիկոսական ընտրությունների հետ: Քանի որ Ղուկաս Կարնեցի Կաթողիկոսը վախճանվել էր 1799 թ. վերջին, ապա իրադարձությունները զարգացան 1800 թ. ընթացքում:

Նախապես կային երկու թեկնածուներ. վերը նշված Կ. Պոլսի Պատրիարք Դանիել Աուրմառեցին, ինչպես նաև Եփրեմ Չորագեղցին, որոշ ժամանակ անց նրանց միացան Չովսեփ Արղությանը և Դավիթ Էնեզեթցին: Պատմագիտության մեջ ընդունված է այս իրադարձությունները, կապված կաթողիկոսական ընտրությունների հետ, կոչել Դավիթ-Դանիելյան վեճեր: Ճիշտ է, վերջիններս որոշ ժամանակ պայքարում էին Կաթողիկոսական Աթոռի համար, սակայն մենք հակված չենք այդ պայքարի վերոհիշյալ ձևակերպման հետ: Այս առումով տեղին է հիշատակել Գ. Սիրունուն. «Յետոյ անելցաւ երրորդ թեկնածու մըն ալ յանձին Յովսեփ Արղութեանի, ծանօթ հայ և ռուս յարաբերութեանց մէջ իր խաղացած դերով, սիրուած ռուս արքունիքին մէջ, եւ հաւանաբար անոր նախընտրած թեկնածուն կաթողիկոսական աթոռին համար, որ, թէւ դեռ պարսիկ հողին վրայ էր, բայց միշտ կը մնար ինչպէս Թուրքիոյ, նոյնպէս ռուսներուն շահագրգռութեան առարկան»⁵: Նշենք, որ մեր խնդիրը չէ

⁴ Ս. Օրմանեան, նույն տեղը, էջ 3192:

⁵ Գ. Սիրունի, Պոլիս և իր դերը, Բելյուս, 1969 թ., հ. 2, էջ 19:

հանգամանորեն կանգ առնել Կաթողիկոսական Աթոռի շուրջ ժավաված իրադարձությունների լուսաբանման վրա: Բայց ինչպես վերոհիշյալ, այնպես էլ այս փաստեր վկայում են, որ այդ պահին Չայոց Կաթողիկոսի գահին թե՛ Օսմանյան կայսրությունը և թե՛ Ռուսական կայսրությունը ցանկանում էին հոենց համար ցանկալի թեկնածու նստեցնել Կաթողիկոսական Աթոռին հետապնդելով քաղաքական որոշակի նպատակներ:

Վերադառնալով Կ. Պոլսի Պատրիարքին, նշենք, որ Ռանիել Սուրմանեցին մինչ մտնելը կաթողիկոսական ընտրարշավի մեջ, առանձնապես աչքի չընկավ Պատրիարք եղած ժամանակ: 1800 թ. մայիսի 18-ին Կ. Պոլսի Ազգային ժողովը Պատրիարք ընտրեց Յովհաննես Չամաչքճյանին: Սակայն XIX դարի սկզբին կաթողիկոսական գահի պայքարի հորձանուտը իր մեջ առավ նաև Կ. Պոլսի հոգևոր շրջանակներին: Եվ պատահական չէր, որ Կ. Պոլսի Պատրիարք Յովհաննես Չամաչքճյանը 1801 թ. մեկ տարվա պաշտոնավարությունից հետո պաշտոնակարգվեց, և նրա փոխարեն Պատրիարք դարձավ Գրիգոր Խամսեցին, որը նույնպես երկար չմնաց որպես Պատրիարք: Նա իր կոշտ գործելակերպի պատճառով պաշտոնակարգվեց եղավ, իսկ Յովհաննես Չամաչքճյանը, վերադառնալով աքսորից, վերստին անցավ Պատրիարքի իր պարտականություններին: Վերը նշված Պատրիարքների հաճախակի փոփոխությունները անմիջականորեն կապվում էին Կաթողիկոսական Աթոռի հավակնորդների գործողությունների հետ: Այդ հավակնորդները ձգտում էին Կ. Պոլսի Պատրիարք կարգել իրենց հավատարիմ թեկնածուին: Վերադառնալով Յովհ. Չամաչքճյանին, նշենք, որ նա դարձավ Ձաքարիա Կաղզվանցու գործի արժանի շարունակողը, չնայած ի համեմատ նախորդի նա ավելի քիչ պաշտոնավարեց:

Նրա պատրիարքության օրոք պոլսահայ գաղթօջախը դադարեց կրքոտ և բուռն բախումների վայր լինելուց: Պատրիարքի նախաձեռնությամբ վերականգնվեցին եկեղեցիներ, հիվանդանոցներ, բացվեցին վարժարաններ, չնայած բազմաթիվ խոչընդոտներին՝ Յովհաննես Չամաչքճյան Պատրիարքի ջանքերով երուսաղեմում նույնպես Պատրիարք ընտրվեց: 1813 թ. ամիրանների թելադրանքով, վատառողջ լինելու պատրվակով, հրաժարվեց պատրիարքությունից՝ չնայած անձամբ մտադրություն չունեի հրաժարվելու: Ահա ինչպես է Յովհաննես Չամաչքճյանին բնութագրում Մ. Օրմանյանը. «Յովհաննես կը ներկայանայ հանդարտ և կանոնաւոր՝ գործիչ մը, հակառակութիւններէ խուսափող, լրացեալ եղելութեանց համակերպող»⁶: Յովհաննես Չամաչքճյանին հաջորդեց Աբրահամ Գոլյան եպիսկոպոսը, որը հաճախ հիշատակվում է նաև Աբրահամ Տաթևացի: Սակայն Աբրահամ Տաթևացին չարդարացրեց այն հույսերը, որ իր անձի հետ կապում էին Կ. Պոլսի հայ մեծամեծները և հավատացյալ բնակչությունը: Իր երկու տարվա պատրիարքության ժամանակամիջոցում Աբրահամ Տաթևացին աչքի չընկավ ազգանպաստ գործունեությամբ: Ավելին, զգալով, որ մի շարք ամիրաններ, որոնք հակակաթողիկական ընդգծված դիրքորոշում ունեին, նա սկսեց պաշտպանություն գտնել կաթողիկամետ խավերի մոտ: Սակայն այդ վիճակը երկար չտևեց, և շուտով

⁶ Մ. Օրմանյան, Ազգապատում, Երուսաղեմ, 1927, հ. 3, էջ 3418:

կաթոլիկամետ ուժերը նույնպես հրաժարվեցին ապավեն կանգնել Պատրիարքին: Աբրահամ Տաթևացին, անհավասարակշիռ և համառ գործելակերպ դրսևորելով, զրկվեց նաև Կ. Պոլսի հանրահայտ ամիրայական գերդաստանների՝ Տյուզյանների, Տատյանների, ինչպես նաև Գարություն Պեզնյանի աջակցությունից: Եվ զարմանալի չէր, որ 1815 թ. դեկտեմբերի սկզբին Աբրահամ Տաթևացին պաշտոնանկ եղավ, իսկ նրա փոխարեն Պատրիարք դարձավ Պողոս Աղրիանապոլսեցի եպիսկոպոսը: Պողոս Աղրիանապոլսեցու պատրիարքական տարիները ուղեկցվեցին բուռն իրադարձություններով: Լինելով խոհեմ, շրջահայաց հոգևորական, նա ձգտում էր իր պատրիարքության տարիների ընթացքում միաբան հայ համայնք ստեղծել Կ. Պոլսում: Սակայն երկարատև բանակցությունները, բանավեճերը, զիջումները արդյունք չտվեցին: Ավելին, քաղաքացիական ժողովրդի մեջ նա ձեռք բերեց «կաթոլիկամետ» Պատրիարքի անուն: Պողոս Պատրիարքի ժամանակ տեղի ունեցան ողբերգական դեպքեր. Տյուզյան գերդաստանի, ինչպես նաև այլ ամիրայական գերդաստանների հալածանքը: Այս բոլորը նրա դեմ անհիմն մեղադրանքների առիթ էին տվել: Եվ ցավալի էր, որ գործույնյա և խոհեմ հոգևոր առաջնորդը 1823 թ., երբ արդեն վերոհիշյալ անցքերը հետևում էին մնացել, հրաժարական տվեց:

Զնայած բազմաթիվ խնդրանքներին ու հորդորներին, նա չփոխեց իր որոշումը: Պողոս Աղրիանապոլսեցուն փոխարինեց Կարապետ եպիսկոպոս Պալաթեցին: Նրա պատրիարքության առաջին տարիները ընդհանուր առմամբ խաղաղ անցան: Այս տարիներին ընդունվեցին դավանաբանական-ծիսական բնույթի կանոններ, որոնք կարգավորում էին հավատացյալ բնակչության կացությունը: 1827 թ. ձգտելով ինչ-որ չափով կարգավորել լուսավորչականների և հայ կաթոլիկների հարաբերությունները, Կ. Պոլսի Պատրիարքը որոշեց հայ կաթոլիկների համար փոխանորդ նշանակել այն պայմանով, որ նա իր հավատակիցների հետ ընդունի Կ. Պոլսի Պատրիարքության գերակայությունը: Սակայն այս նախաձեռնությունը, որը կոչված էր ինչ-որ չափով կարգավորելու լուսավորչականների և կաթոլիկների փոխհարաբերությունները, ձախողվեց: Ավելին, Բ. Ղուռը, օգտվելով առիթից, հայ կաթոլիկներին մեղադրեց պետական դավաճանության մեջ և աքսորեց նրանց: Կարապետ Պալաթեցու ջանքերով վերանորոգվեց Գում-Գափուի Սայր եկեղեցին, որը 1826 թ. հրդեհից հետո մեծապես տուժել էր: Սայր եկեղեցուն կից վերանորոգումից հետո բացվեց դպրոց-ուսումնարան: 1830-31 թթ. Պատրիարքի ջանքերով վեր խոյացան նաև Ակյուտարի Սուրբ Խաչ և Խաքսըլոյի Սուրբ Ստեփանոս եկեղեցիները: Կարապետ Պատրիարքը հրաժարվել է իր պաշտոնից մեզ անհայտ պատճառներով 1831 թ.: Նշենք նաև, որ Կ. Պոլսի Պատրիարք Կարապետ Պալաթեցու ջանքերով 1828 թ. կազմվում է ուսումնական ժողով, որով փորձ է կատարվում կարգավորելու և իսկելու կրթական ոլորտը: Կարապետ Պալաթեցուն հաջորդեց Ստեփանոս Ջաքարյանը, որը հիշատակվում է Աղավնի մականունով: Արմաշի և Նիկոմեդիայի (Իզմիթ) թեմական առաջնորդը դարձավ Կ. Պոլսի Պատրիարք: Սինչ վերոհիշյալ Պատրիարքին անդրադառնալը, կցանկանայինք մեջ բերել Գ. Սիրունու խոսքերը պատրիարքության գործունեության

վերաբերյալ. «Եւ այնուամենայնիւ Պատրիարքարանը կը շարունակէր շնչել համառոճակ կոնակը ֆէրմաններուն տուած: Ինքն էր, որ կը խնդրէր յանուն հայ ժողովուրդին, ծափ կուտար ու կու լար, կը բողոքէր ու կը քծնէր: Սուլթանին մօտ հայ ժողովուրդը կը ներկայացներ, ու հայ ժողովուրդին մօտ սուլթանը»⁷: Կարծում ենք, որ այս բնորոշումը առավել դիպուկ ձևով է բնութագրում Պատրիարքության իրավիճակը թուրքական իրականության պայմաններում: Պատրիարքները փոխվում էին, սակայն Պատրիարքարանը շարունակում էր իր ազգամաստ առաքելությունը՝ հաղթահարելով օբյեկտիվ և սուբյեկտիվ բազմաթիվ խոչընդոտներ:

Վերադառնալով Պատրիարք Ստեփանոս Չաքարյանին, ստորև ներկայացնում ենք Մ. Օրմանյանի նրան տրված բնութագրականը. «Չագացումները և ուղղութիւնը բարեմիտ և բարեսէր, բնաւորութեամբ հեզահամբոյր և առաքինի, բոհութենէն կը խորշէր, խստութենէն կը զգուշանար, համեստ և չափաւոր սկզբունքներու կը հետեւէր, և այս էր որ ոմանց աչքին տկար և անձեռնհաս կ'երեւար»⁸: Ստեփանոս Չաքարյանի պատրիարքության 8 տարիները անցան հանդարտ և խաղաղ պայմաններում: Նրա պատրիարքության տարիներին վերանորոգվեցին շուրջ 16 եկեղեցիներ: Սակայն իր մեղմ և ոչ սկզբունքային բնավորության պատճառով նա չկարողացավ պայքարել պոլսահայ համայնքում տարածվող բողոքականության դեմ: Վերջիններս 1832 թ. սկսած օրեցօր նորանոր հետևորդներ էին ձեռք բերում: Հայ Առաքելական Եկեղեցուն նվիրված ամհատները, մտահոգված լինելով բողոքականների ակտիվացմամբ, առաջարկում են Ամասիայի հոգևոր առաջնորդ Հակոբոս եպիսկոպոս Սերոբյանին ստանձնել Պատրիարքի օգնականի պաշտոնը: Հակոբոս եպիսկոպոսը գալով Կ. Պոլիս, դիմեց պատժիչ քայլերի: Նա իր մոտ կանչեց բողոքականություն ընդունած Հովհաննես Տեր-Սահակյանին, Պողոս ուսուցչին, Գևորգ Արծրունի քահանային, Թովմաս վարդապետին, տիրացու Հովհաննես վարժապետին և քսորեց նրանց տարբեր վայրեր: Եվ պատահական չէր, որ Հակոբոս եպիսկոպոսը եռանդուն գործելու պատճառաբանությամբ պահանջեց ավելի մեծ լիազորություններ: Նա շուտով հասավ նրան, որ Ստեփանոս Չաքարյանը 1839 թ. մարտի 6-ին հրաժարական տա, իսկ ինքը՝ մարտի 16-ին դարձավ նոր Կ. Պոլսի Պատրիարք: Մինչ անդրադառնալը Հակոբոս Պատրիարքին, նշենք, որ նրա գործունեությունը պատրիարքի պաշտոնում հակասական մտորումների տեղիք է տալիս: Կ. Պոլսի Պատրիարք դառնալով Հակոբոս Սերոբյանը շարունակեց պայքարը բողոքականության դեմ, սակայն այն երկար չի տևում, քանի որ բողոքականները, հանձինս անգլիական դեսպանի, գտնում են պատկառելի հովանավորի, և Հակոբոս Պատրիարքը դադարեցնում է պայքարը բողոքականների դեմ հասկանալով, որ կարող է պաշտոնանկ արվել Օսմանյան իշխանությունների կողմից: Դրանից հետո նա սկսում է զբաղվել ճեմարանի հոգաբարձության հարցերով, սակայն այստեղ սպասում էր ձախողում: Ի հակակշիռ հայ ամիրաների,

⁷ Հ. Սիրունի, նույն տեղը, էջ 182:

⁸ Մ. Օրմանեան, նույն տեղը, էջ 3561:

արհեստավորական խավը պայքարում էր մասնակից լինել ազգային կարևոր խնդիրների լուծմանը: Հակոբոս Պատրիարքի համակրանքը արհեստավորական խավի կողմն էր, նա միամտաբար կարծում էր, որ նրանց օգնությամբ կարող էր ճեմարանի հոգաբարձության խնդիրը լուծել: Սակայն վերոհիշյալ խավերի անհանդուրժողականությունը փակուղի տարան Հակոբոս Պատրիարքի նախաձեռնությունը: Հուսահատվելով, Հակոբոս Պատրիարքը 1840 թվականին, մեկ տարվա պատրիարքության շրջանը հազիվ բլուրրած առանձնանում է ետիզուլեի Ս. Փրկիչ հիվանդանոցում: Օգտվելով այս միջադեպից, ամիրաները անհիմն զրպարտություններ են տարածում Պատրիարքի հասցեին: Օսմանյան իշխանությունների միջամտությամբ Պատրիարքարան է վերադառնում Ստեփանոս Չաքարյանը, սակայն նրա երկրորդ պաշտոնավարումը նույնպես կարճ է տևում՝ 1840-41 թթ.: Ստեփանոս Չաքարյանը ձգտում է իր խորհրդական Պողոս եպիսկոպոս Թաքթաքյանի հետ շարունակել Հակոբոս Սերոբյանի գործը: կարգավորել ճեմարանի ֆինանսա-տնտեսական վիճակը՝ այդ գործում ներգրավելով արհեստավորական խավին և բնակչության լայն զանգվածներին: Սակայն ամիրաների «պասիվ» դիրքը խափանեց Պատրիարքի և արհեստավորների ջանքերը: Ավելին, թուրքական իշխանությունները, անհանգստանալով ժողովրդական հուզումների առարկայացումից, սկսեցին պատժամիջոցներ կիրառել ճեմարանի շուրջ ծագած հուզումների առավել ակտիվ մասնակիցների նկատմամբ: Ստեփանոս Չաքարյանի հրաժարականը կապվում է այս հուզումների հետ, քանի որ իր ամունը նույնպես շոշափվում էր այդ դեպքերի առնչությամբ:

4. Պոլսի նոր Պատրիարք դարձավ Աստվածատուր Պոլսեցին, որը, Մ. Օրմանյանի կարծիքով, հայ ամիրայական խավի կողմից էր ընտրված: Նրա պատրիարքության երեք տարիները ոչնչով աչքի չընկան: Դեռ ավելին, խորանում էր ամիրաների և ժողովրդական զանգվածների միջև եղած անըրպետը, որը անհանգստացնում էր առաջիններին:

Ամիրաները ձգտում էին 4. Պոլսի Պատրիարքի Աթոռին տեսնել մի մարդու, որը ժողովրդական հարգանք վայելեր և միևնույն ժամանակ «զուսպ» և «խոհեմ» լիներ ազգային կյանքում: 1844 թ. Աստվածատուր Պոլսեցու հրաժարականից հետո ընտրությունը ընկավ Ձմյուռնիայի առաջնորդ Մաթևոս եպիսկոպոս Չուխաքյանի վրա, որի կազմակերպչական և մտավոր կարողությունները խոստումնալից էին թվում թե՛ ամիրաներին և թե՛ բնակչության մյուս խավերին: Մաթևոս Չուխաքյանի պատրիարքության չորս տարիները իրադարձություններով լեցուն էին ինչպես պոլսահայ գաղթօջախում, այնպես էլ Օսմանյան կայսրության հայաշատ այլ վայրերում: Նրա պատրիարքության տարիները համընկան պոլսահայ գաղթօջախում կրթա-մշակութային վերելքի հետ: Իր ջանքերով, չորս տարվա ընդմիջումից հետո, 1845 թ. հոկտեմբերի 1-ին, վերաբացվեց Սկյուտարի ճեմարանը: Պետք է նկատել, որ կրթամշակութային վերելքը մինչ Մաթևոս Չուխաքյանի Պատրիարք դառնալը արդեն սկսել էր թափ առնել: Պարզապես շատ երիտասարդներ եվրոպայում կրթություն ստանալով այդ ժամանակամիջոցին վերադառնում են 4. Պոլիս և դառնում լուսավորության և մշակույթի տարածողներ: Մաթևոս Չուխաքյանի առավել

կարևոր գործեղից էր Կ. Պոլսի Պատրիարքարանի իրավասությունների հստակեցումը և, ինչպես Ս. Օրմանյանն է այդ կապակցությամբ նշում, «որ 1839-է ասդին ազգային կնճիռ մը դարձած էր ժողովրդական ձգտումներու և ամիրայական պնդումներու երեսն, և զօրաւոր ձեռքի մը կը կարօտէր իւր լուծումը»⁹: Հայոց Պատրիարքի ջանքերի շնորհիվ 1847 թ. մայիսի 7-ին Բ. Ղուղը հրամայեց երկու ներկայացուցչական մարմիններ ստեղծել Պատրիարքի իրավասության տակ: Դրանք էին հոգևոր և գերագույն ժողովները: Հոգևոր ժողովը պետք է զբաղվեր կրոնա-դավանաբանական, կենցաղային-ծիսական հարցերով, իսկ գերագույն ժողովը պետք է տնօրիներ աշխարհիկ հարցերը:

Վերը եիշատակված առաջին մարմինը պետք է ունենար 14 անդամ, իսկ երկրորդը՝ 20: 1847 թ. մայիսի 9-ին ընտրվեցին հոգևոր և գերագույն ժողովների ներկայացուցիչները, ընդ որում գերագույն ժողովում ներկայացված էին ինչպես երևելի շատ ամիրաներ, այնպես էլ նշանավոր արհեստավորներ: Թերևս կարելի է համաձայնվել Ս. Օրմանյանի հետ, որ այս ներկայացուցչական մարմինները դարձան արևմտահայերի ազգային սահմանադրության հիմքը: Մաթևոս Չուխաջյանի գործելակերպը շուտով դժկամություն առաջացրեց ավելի երևելի ամիրաների մոտ: Ամիրաները առիթ էին որոնում ազատվելու նրանից: 1848 թ. Ա. Հովհան Ոսկեբերան եկեղեցու դպրոցի հետ կապված բարեգործության շուրջ անհարկի աղմուկ քարծրացավ, և, օգտվելով առիթից, ամիրաները պահանջեցին Մաթևոս Չուխաջյանի հրաժարականը: Ակզբում նա հակառակվեց, բայց հետո տեղի տվեց: Եվ քանի որ Պատրիարքը մեծ ժողովրդականություն էր վայելում, երկյուղելով ժողովրդական հուզումներից, ամիրաները գտան Մաթևոս Չուխաջյանի արժանի փոխանորդ՝ հանձին Հակոբոս Սերոբյանի, որը 2-րդ անգամ դարձավ Պատրիարք, 1848 թ.: Հակոբոս Սերոբյանի պատրիարքության երկրորդ ժամկետը առանձնապես ոչնչով աչքի չընկավ: Կյանքն իր հունով առաջ էր ընթանում պոլսահայ գաղթօջախում, բացվում էին եկեղեցիների, վերանորոգվում էին հները: Ութ տարվա պատրիարքությունից հետո, 76-ամյա Պատրիարքը հրաժարական տվեց, սակայն այն չընդունվեց՝ կապված Հայոց Կաթողիկոս Ներսես Աշտարակեցու մահվան հետ: Միայն Մաթևոս Կոստանդնուպոլսեցու Կաթողիկոս ընտրվելուց հետո, 1858 թ. հոկտեմբերի 7-ին, նոր Կաթողիկոսի ներկայությամբ ընդունվեց Հակոբոս Սերոբյանի հրաժարականը:

Այժմ անդրադառնանք Կ. Պոլսի Պատրիարքարանի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի փոխհարաբերություններին: Ինչպես XVIII դարի վերջին, այնպես էլ XIX դարի առաջին կեսին Կ. Պոլսի Պատրիարքարանը մեծ հեղինակություն էր վայելում: Նշենք, որ Ղուկաս Կարենցի և Եփրեմ Չորագեղցի Կաթողիկոսները ընտրվել էին Կ. Պոլսի Պատրիարքարանի հովանավորության շնորհիվ: Ճիշտ է, միշտ չէ, որ Մայր Աթոռի և Պատրիարքարանի միջև հարաբերությունները «հարթ» էին ընթանում: Կապված այս կամ այն իրադարձության հետ (հատկապես դա դրսևորվեց XIX դարի սկզբին, կաթողիկոսական թափուր գահի հետ կապված դեպքերի ժամանակ), Ս. Էջմիածնի և Կ. Պոլսի

⁹ Ս. Օրմանյան, նույն տեղը, էջ 3811:

Պատրիարքարանի միջև տարածայնություններ էին ծագում: Բնական է, այդ տարածայնությունները չէին կրում դավանաբանական բնույթ: Պարզապես Մայր Աթոռը մերթ ընդ մերթ Կ. Պոլսի և նրան ենթակա եկեղեցական թեմերում ձգտում էր որոշակի ազդեցություն ձեռք բերել: Ինչպես Կ. Պոլսի Պատրիարքները, այնպես էլ նրանց հովանավորյալ ամիրաները դժկամությամբ էին դա ընդունում: Նրանք գիտակցում էին, որ Բ. Դուռը ամեն ինչ կարող է փոխել իրենց նկատմամբ այն «բարեհաճ» վերաբերմունքը, որ նրանք ձգտում էին, որքան հնարավոր է, երկար պահպանել: Օսմանյան իշխանությունների կասկածները ավելի շատացան, երբ Արևելյան Հայաստանը 1826-28 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո միացավ Ռուսաստանին:

Ամփոփելով ասեմք, որ XV դարից սկսած պոլսահայ գաղթօջախում և ապա արևմտահայության համար Կ. Պոլսի Պատրիարքարանը հայապահպանության գլխավոր մարմինն է եղել: Չնայած բազմաթիվ խոչընդոտներին (թուրքական իշխանությունների միջամտությունը, հայ ամիրաների «ազդեցությունը» և այլն), հայոց Պատրիարքները մեծ ներդրում են ունեցել կրթալուսավորական ասպարեզում, ազգային կյանքի ամենատարբեր կնճռոտ հարցերի լուծման ժամանակ: Նրանք հետևողական պայքար են մղել այլադավանության (կաթոլիկների և բողոքականների) դեմ՝ քաջ գիտակցելով, որ օտար բռնակալության պայմաններում Հայ Առաքելական եկեղեցին այն հիմնասյուներից մեկն էր, որ կարող էր գերծ պահել հայությանը ուժացումից: Կ. Պոլսի հայոց Պատրիարքների ջանքերով և աջակցությամբ գաղթօջախում առաջադիմում էր տպագրական գործը: Շնորհիվ հոգևոր այրերի ինչպես Կ. Պոլսում, այնպես էլ նրա ենթակա թեմերում, նշված ժամանակաշրջանում կառուցվեցին բազում եկեղեցիներ, որոնցից շատերը մինչ օրս էլ կանգուն են: Գիշտ է, Կ. Պոլսի հայոց Պատրիարքներից ոչ բոլորն են աչքի ընկել եռանդուն և ազգանպաստ գործունեությամբ (դրա համար կային օրյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ), սակայն փաստ է, որ Կ. Պոլսի Պատրիարքարանը իր գործունեությամբ և առաքելությամբ անջնջելի հետք է թողել պոլսահայ գաղթօջախի պատմության մեջ և այսօր էլ շարունակում է իր առաքելությունը: